ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19,

10/12/2025թ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

ԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Ձեզ ենք ներկայացնում ««Առողջության համընդհանուր ապահովագրության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի» նախագծի (*կ-1189-13.11.2025-առհ-011/0*) վերաբերյալ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության առաջարկները:

Գրությանը կցվում է.

1. Օրենքի նախագծի վերաբերյալ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության որոշումը:
2. Օրենքի նախագծի վերաբերյալ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության առաջարկները և դրանց հիմնավորումները:

«ՀԱՅԱՍՏԱՆ»

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Արծվիկ Մինասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

10/12/2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և 2-րդ մասով՝ Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցությունը

Որոշեց՝

Հավանություն տալ «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի» նախագծի (*կ-1189-13.11.2025-առհ-011/0*) վերաբերյալ սույն որոշմանը կցված առաջարկներին և սահմանված կարգով դրանք ներկայացնել Ազգային ժողովին:

«ՀԱՅԱՍՏԱՆ»

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

«ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ» ՆԱԽԱԳԾԻ (*Կ-1189-13.11.2025-ԱՊՀ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝Նախագիծ) 11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի եւ ռեզիդենտ մինչեւ 18 տարեկան երեխաները, առանց ծնողական խնամքի մնացած 18-23 տարեկան երեխաները, *միակողմանի ծնողազուրկ 18-23 եւ երկկողմանի ծնողազուրկ մինչեւ 26 տարեկան առկա (ստացիոնար) ուսուցմամբ սովորող անձինք.*

2. «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ *Հայաստանի Հանրապետության քաղաքացի եւ ռեզիդենտ 63 և բարձր տարիքի անձինք.*

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները և ծնողազուրկ անձինք պետության հատուկ պահպանության ներքո գտնվող սոցիալական խումբ են:

Այս խմբերի դեռահասները և երիտասարդները սովորաբար չունեն սեփական եկամտի կայուն աղբյուր, իսկ ընտանիքի բացակայությունը նրանց զրկում է ապահովագրավճարի վճարման բնական «ընտանեկան մեխանիզմից»:

Առկա ուսուցմամբ սովորող երիտասարդները փաստացի ամբողջական աշխատանքային զբաղվածություն չեն կարող իրականացնել, ուստի ապահովագրական վճարը իրենց ուժերով հոգալը դժվար է:

ԵԱՀԿ և ԵՄ հանրային առողջության ծրագրերում լայնորեն կիրառվում է «prolonged youth dependency» մոտեցումը՝ ըստ որի ուսման շրջանում երիտասարդը համարվում է ֆինանսական կախվածության մեջ գտնվող անձ:

Այդ պատճառով՝ բազմաթիվ երկրներում ուսանողները ընդգրկված են պետության կողմից սուբսիդավորվող խմբերում մինչև 25 կամ 26 տարեկան:

Բազմաթիվ երկրներում (Ֆրանսիա, Գերմանիա, Էստոնիա, Չեխիա) պետությունը տարեց մարդկանց ապահովագրավճարի ամբողջական կամ մասամբ սուբսիդավորող դեր ունի հենց այս պատճառով: 63 և բարձր տարիքային խմբում աշխատանքային զբաղվածության մակարդակը նվազում է, կենսաթոշակները հաստատապես ցածր են համապետական միջին սպառողական զամբյուղի համեմատ, առողջապահական գործող ծախսերը կազմում են նրանց ամսական եկամտի մեծ մասը: